

Հայերեն ինչ գրքեր կան իրենց հետաքրքրող հարցի մասին, այնտեղ կներկայացվի հայ տպագիր գիրքը քսոթ թեմաների: Այդպիսի մասնատարակության ամեն մի հատորը միամասնակ կլինի մի ամբողջական հրատարակություն: Բացի այդ, յուրաքանչյուր հատորի, ինչպես և ողջ հրատարակության վերջում արվող հեղինակային-այբբենական ցանկը կփոխարինի այբբենական մասնագիտության առավելությունները՝ այս կամ այն հեղինակի անունով հրատարակված գրքերի մասին լրիվ տեղեկություններ տալու տեսակետից: Իսկ 1512—1800 թվականների հայ գրքի մասնակազմական ցուցակն ընդգրկող լրացուցիչ հատորը անհրաժեշտ տեղեկություններ կտա հայ գրքի պատմության ամենահետաքրքրական շրջանի վերաբերյալ: Պետք է անել, սակայն, որ մասնագիտության մեջ նյութերի սխառմամանից պատվությունն ստեղծելը բավական դժվար գործ է: Դրա համար անհրաժեշտ կլինի հայերեն բոլոր հրատարակությունները դասակարգման ենթարկել նախորդ մշակված սխառմի համաձայն: Հանրային գրադարանի հայ մատենագիտության բաժինը պետք է կարողանա հաղթահարել այդ դժվարությունը:

Երանող հարց է նաև գրքերի նկարագրությունը: Ինչ տեղեկություններ տալ գրքի մասին: Բավարարվե՞լ արդյոք գրքի հեղինակի, վերնագրի, հրատարակման (տեղ, թիվ) և բանակազմի (էջեր, նկարներ, լուսանկարներ, ավանդների նշումով, թե՛ առաջին մանրամասն տեղեկություններ: Երանող հարցն է համարվե՞ց կազմել գրքերի նկարագրության երկու տեսակի կանոններ՝ հնատիպ գրքերի (մինչև 1850 թ. հրատարակված) և նոր շրջանի գրքերի համար:

Հնատիպ գրքերի նկարագրությունները կլինեն ավելի ծավալուն, նոր շրջանի գրքերի նկարագրությունները՝ ավելի պարզ, սակայն յուրաքանչյուր հրատարակության մասին կարևոր բոլոր տեղեկություններն ընդգրկող:

Քանի որ նախորդ հայ մատենագիտական ցանկերում ներկայացված գրքերի գտնվելու վայրը չի նշվել, այժմ էլ ոմանք կործում են, որ այդ կարգի տեղեկություններ տալու հարկ չկա: Սակայն որոշվեց մատենագիտության մեջ գրքերի գտնվելու վայրը այնուամենայնիվ նշել, բանի որ այդ շահագանց մեծ նշանակություն կունենա բնութագրողների, հատկապես գիտական աշխատողների համար, մանավանդ հայ մատենագիտություն կազմելու հակառակած աշխատանքը կատարելուց հետո անհրաժեշտ կլինե՞ր լանել այդ հարցը:

Պետական հանրային գրադարանի հաշվապահ մատենագիտության բաժինը արդեն սկսել է իր աշխատանքները: Նկարագրվում և դասակարգվում են հանրային գրադարանի գրքերը, գտնվողում պատրաստի նկարագրությունները: Հայագիտական այս շատ կարևոր աշխատությունը ստեղծելու գործում հանրային գրադարանին պետք է օգնեն Հայաստանի Պետդրամատարանը, Գիտությունների տեղեկատվային կենտրոնական գրադարանը, Երևանի Պետական համալսարանի գրադարանը և Մատենագրարները:

Աշխատանքների վերջին շրջանում հանրային գրադարանը կզգա արտասահմանյան մի քանի գրադարանների, հատկապես Վենետիկի ու Վիեննայի ազգային գրադարանների լուրջ օգնության կարիքը:

Թ. ԻՄԵՆՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՆԵՐԻ ՄԻ ՆՈՐ ԳԱՆՁ

Անտիոք քաղաքից մոտ 30 կմ. հեռավորության վրա, հնում «Դաֆնե» կոչված վայրում (Հարպիլթի մոտ) հողային աշխատանքների միջոցին գտնվել է միջնադարյան արձաթյա դրամների մի գանձ: Այդ գանձն ամբողջությամբ ձեռք է բերել Սփյուռքում մեր հայրենակից հնասեր Արմենակ Առաքելի Բուլատյանը, որը դրամագետ Պ. Կարապետյանի ջանքերով անհրաժեշտ դասակարգման և ուսումնասիրության ենթարկելուց հետո ուղարկել է այն Երևան՝ որպես նվեր Հայաստանի Պատմության Պետական թանգարանին:

Ըստ ժամանակի՝ գանձի մեջ եղած դրամները բաժանվում են երեք հիմնական խմբերի:

ա) Կիլիկյան հայոց թագավոր Լևոն II-ի (1198—1219) 73 դրամներ:

բ) Փոքր Ասիայի սելջուկյան սուլթաններ Քեյխուսրուու I-ի (1192—1200 և 1204—1213) և Քեյխուսրուու III-ի (1267—1283) 4 դրամներ:

գ) Կիլիկյան հայոց Հեթում թագավորի և նրա կնոջ՝ Զարեկ թագուհու (1226—1270) 42 դրամներ:

Գանձը խիստ հետաքրքրական է իր կազմով: այստեղ առկա են միջնադարյան հայկական այնպիսի արձաթյա դրամներ, որոնց բազմազան տեսակներից մի քանիսը մեզ համար բոլորովին նոր են: Բացի դրանից, նաև մեզ ցույց է տալիս նաև Կիլիկյան հայկական պետության

դրամական սխտեմի առանձին միավորներ. Այսպես օրինակ՝ գանձը վկայում է, որ շրջանառության մեջ են եղել երկդրամյաններ՝ 5,33 դրամ քաշով բարձրորակ արծաթից, կես երկդրամյաններ՝ 2,70 դրամ, բառորդ երկդրամյաններ՝ 1,4 դրամ քաշով, և վերջապես ամենատարածվածը եղել է 3 դրամ արծաթից «դրամը», որը հավասարադուր էր այդ ժամանակներում Առաջավոր Արևելքի երկրներում գործող դրամական հիմնական միավոր դիրհեմին: Գանձի սելջուկյան զիրհեմները թողարկվել են Սվաս և Կայսարիյա քաղաքներում, հիշրայի 505, 672 և 674 թվականներին, այսինքն մեր թվականության 1208/09, 1273/74 և 1275/76 թվականներին: Միայն մի զիրհեմի վրա քաղաքի անունն անորոշ է մնում: Գանձի գերակշռող մասը հայկական դրամներ են: Կիլիկյան դրամներն ամենից շատ դուրս էին գալիս Սիս քաղաքի փողերանոցից և այնուհետև մտնելով շրջանառության մեջ Առաջավոր Արևելքի մուսուլմանական և այլ իշխանությունների դրամների հետ, միաժամանակ սպասարկում էին ինչպես Կիլիկիայի վաճառաշահ քաղաքների, այնպես էլ նրա հարևան երկրների արտաքին ու ներքին առևտրի պահանջները: Հիմք ընդունելով «Բաֆ-նես»-ի հիշյալ գանձի մեջ եղած դրամներից ամեն-

նաուշ թողարկված դրամի տարեթիվը՝ հիշրայի 674 թվականը, որը համապատասխանում է մ. թ. 1275—1276 թթ., պետք է ենթադրել, որ այդ գանձը հավանաբար հողին է հանձնվել XIII դարի վերջին բառորդում:

Իսկ Հայաստանի ներկայիս Հայկական ՍՍԲ-ի տերիտորիայում կիլիկյան հայկական դրամներ չեն գտնվել: Նույնիսկ ամբողջ Անդրկովկասում նրանք խիստ հազվադեպ են: Մինչդեռ պատմական Կիլիկիայի տերիտորիայում և նրա մերձակա շրջաններում այդպիսի դրամներ կարող են գտնվել հաճախ, որպես տեղի անցյալ դրամական շրջանառության մնացորդներ: Այդ են վկայում Կիլիկյան Հայաստանի դրամների հայտնաբերման մի քանի դեպքեր, որոնք կատարվել են Կիլիկիայում կամ նրան սահմանամերձ վայրերում:

Նրախտադիտություններ պետք է նշել, որ Սվյուտերից ստացված XIII դ. դրամների այս գանձն իր մեջ պարունակած կիլիկյան հայատառ դրամների բազմաթիվությունը նշանակալից ավանդ է Հայկական ՍՍԲ Պետական Պաշտպանության թանգարանի հուշարձանների ֆոնդին:

Խ. ՄՈՒՇԵՂՅԱՆ